

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՌԵԿՏՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 10

24.07. 2020 թ

**1. Հանրապետությունում նոր տիպի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում ստեղծված իրավիճակի վերաբերյալ.**

Ընդունել ի գիտություն և համալսարանի տարածքում նույնպես խստորեն պահպանել հակահամաճարակային անվտանգության կանոնները:

**2. 2019-2020 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփման վերաբերյալ.**

2.1. Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի համավարակի պայմաններում հայտարարված արտակարգ դրությամբ և առկա խնդիրներով պայմանավորված, ուսանողներին ընձեռել 2019-2020 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննությունների/ստուգարքների վերահանձնման ևս մեկ (լրացուցիչ) հնարավորություն սեպտեմբեր ամսին՝ ուսման վարձավճարների պարտքերի մարումից հետո:

2.2. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին, իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին՝ քննարկել և 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակում, ուսման վարձավճարների փոխհատուցման շրջափոխման/փոխատեղման մրցույթի կազմակերպման համար մշակել հատուկ մեխանիզմներ, որոնք կկիրառվեն նոր տիպի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ստեղծված իրավիճակում ու կապահովեն բարձր առաջադիմությամբ, ուսման վարձավճարների ուշացման պատճառով քննություններին չթույլա-տրված ուսանողների մասնակցությունը շրջափոխման մրցույթին:

2.3. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին և հեռակա ուսուցման դեպարտամենտի պետ Հ. Հարությունյանին՝ մինչև սեպտեմբերի 15-ը ավարտին հասցնել և գործարկել ՀԱԱՀ էլեկտրոնային կառավարման e-Buh համակարգը ՀՈՒԴ-ի համար:

2.4. Հանձնարարել արտաքին կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանին, Erasmus+ ծրագրի գործընկեր համալսարանից հնարավորինս սեղմ ժամկետներում ստանալ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ուսանողներ Ղևոնդ Բատիկյանի և Վալերի

Վանյանի ուսումնական գործընթացի ավարտի վերաբերյալ փաստաթղթերը (տրանսկրիպտները), վերականգնել ուսանողական իրավունքները և թույլատրել մասնակցելու քննաշրջանին:

**3. ՀԱԱՀ 2020-2021 ուս. տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ.**

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ ՀԱԱՀ աշխատակիցների միջոցով սոցիալական տարբեր հարթակներով, ցանցերով, տեղական/մարզային հեռուստաընկերություններով (Տավուշ, Լոռի, Սիսիան, Շիրակ, այլ) ակտիվացնել ՀԱԱՀ-ում, մասնաճյուղերում ընդունելության վերաբերյալ տեղեկատվության, բաներների, տեսահոլովակների տարածումը՝ դեռևս չկողմնորոշված դիմորդներին գրավելու համար, իսկ ս.թ. օգոստոսի 15-ից կազմակերպել վճարովի գովազդ:

**4. ՀԱԱՀ 90-ամյակի հոբելյանական միջոցառումների կազմակերպման վերաբերյալ.**

4.1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ. Մակարյանին՝ ամփոփել և մինչև հուլիսի 28-ը ներկայացնել համալսարանի 90-ամյակի հոբելյանական միջոցառումների ամփոփ ցանկը, աշխատանքային պլանը, իրականացման ժամանակացույցը, պատասխանատուները և տրամադրել համալսարանի բոլոր ստորաբաժանումներին:

4.2. Հանձնարարել գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանին՝ սեղմ ժամկետներում, միջազգային կապերի դեպարտամենտի, ՏՏ կենտրոնի, ֆակուլտետային ղեկնատների և ստորաբաժանումների հետ համագործակցելով, արագացնել միջազգային գիտաժողովի նախապատրաստական և կազմակերպչական բոլոր աշխատանքները:

**5. 2016թ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից (3 ուսանող) կամ մարտական հերթապահություն իրականացրած (3 ուսանող) ՀՈՒԴ ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի սահմանման հարցի վերաբերյալ.**

5.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի 2016թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից 2019-2020 ուստարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 50%-ի չափով.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտություն, կուրս	Տարեկ. ուսման վարձը (դրամ)	Զեղչի չափը (դրամ)
1.	Բաղդյան Գեղամ Կարենի	Գյուղ. Մեքենայ. - 5	200000	100000

2.	Ռոստոմյան Դավիթ Ռազմիկի	ԱԷԿ և ՍԷԿ - 2	440000	220000
3.	Օհանյան Տիգրան Աշոտի	Ագրոբիզնես - 5	300000	150000

5.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի 2016թ. բաժնային պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած 2019-2020 ուստարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 30%-ի չափով.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտությո- ւուն, կուրս	Տարեկ. ուսմ. վարձի զեղչ (դրամ)	Զեղչի չափը (դրամ)
1	Սիմոնյան Տիգրան Սուրենի	Ագրոբիզնես - 3	440000	132000
2	Գևորգյան Սամվել Համիկի	Մսի և մսամթերք. տեխ. - 2	340000	102000
3	Դավթյան Տիգրան Ղարիբի	Ագրոնոմիա, սելեկց., գեն. - 1	360000	108000

6□ Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Գեղամի Սարգսյանի ուսման վարձավճարի զեղչի սահմանման հարցի վերաբերյալ□

Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին, իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին՝ քննարկել ՀՈՒԴ «Ագրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Գեղամի Սարգսյանի ուսման վարձավճարի զեղչի հարցը և կայացնել համապատասխան որոշում:

7□ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանի հաղորդումը «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության 2-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Արսեն Գրիգորի Դավթյանի ուսման վարձավճարի փոխհատուցման հարցի վերաբերյալ□

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության վճարովի համակարգի ուսանող Արսեն Գրիգորի Դավթյանի 2019-2020 ուստարվա 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի համար սահմանված 200000 դրամ վարձավճարը փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ